

*Ս. ԼՈՒՍԱԿՈՐԻՉ ՀԱՅՅ. ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ՍԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ
ՆԻ ԵՈՐՔ*

**ST. ILLUMINATOR'S ARMENIAN APOSTOLIC CATHEDRAL
NEW YORK, NY**

E-NEWSLETTER

FRIDAY, MAY 3, 2013

REV. FR. MESROB LAKISSIAN, PASTOR



HISTORY OF ARMENIA: PAST, PRESENT, FUTURE

Series of Seminars (8) began on Thursday, May 2, 2013

At the St. Illuminator Cathedral's John Pashalian Hall

Opening Remarks delivered by Archbishop Oshagan Choloyan, Prelate and Ambassador Garen Nazarian

221 East 27th Street, New York, NY 10016

Tel: 212-689-5880 Fax: 212-889-1174

E-Mail: office@stilluminators.org

Website: www.stilluminators.org

ANC OF NEW YORK

On Friday, April 26, the Armenian National Committee of New York hosted a commemorative event at St. Illuminator Cathedral's John Pashalian Hall on the occasion of the 98th anniversary of the Armenian Genocide. The main speaker was Professor Henry Theriaut of Worcester State College, who spoke about "Beyond Recognition: Justice for the Armenian Genocide." This event was the first in a series being organized by the ANC of New York, to "increase awareness of the need to proactively seek reparation for the crime of the Armenian Genocide."

Other speakers included Archbishop Oshagan, Sarina Turbendian, Arousiag Markarian, and Doug Geogerian.



From left, Chris Parnagian, Sarina Turbendian, Arousiag Markarian, Archbishop Oshagan, Professor Henry Theriaut, Rev. Fr. Mesrob Lakissian, and Doug Geogerian.

ԱՐԻՍ ՍԵԽԱԿԻ ՍԱՀՈՒՄՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԼԻՅԸԸ

Շաբաթ, Ապրիլ 27-ին սիրուած ու յարգուած մտաւրական Արիս Սեւակի անժամանակ մահուան առաջին տարելիցին առթիւ իր այրին՝ Աստղիկ Սեւակ, զաւակները ու ընտանիքի այլ անդամներ, ինչպէս նաև գրչակից ընկերները, որոնց կարգին նաև Փարիզին ժամանած "Բագին" պարբերականի խմբագիր՝ Յակոբ Պալեան եւ իր տիկինը այցելեցին Արիսի գերեզմանը:

Նոր զետեղուած հայկական խաչքարի ոճով տապանաքարի օրինութիւնը կատարեց Ս. Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ Հոգեւոր Հովհին՝ Արժ. Տէր Մեսրոպ Քհնյ. Լազիսիւան:

Յետոյ, Արիսի յիշատակը յարգող անհատներ այցելեցին իր բնակարանը, ուր հոգեձաշէն ետք, Արիսի կեանքին դրուազներ փոխանակեցին՝ քաղցր յիշատակներ, հետաքրքրական, երբեմն նոյնիսկ զուարձալի վերյուշներ պատմելով:

Յաջորդ օրը Եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Սեւակի հոգոյ հանգստութեան համար՝ իր ընտանիքի, մտերիմ բարեկամներու եւ "Համազգային"ի Նիւ Եռքի մասնաձիւի խնդրանքով:



EMPOWERING ARMENIAN COMMUNITY WITH FINANCIAL KNOWLEDGE

On Sunday, April 28, financial planner Anna D. Bennett Avetisyan presented a workshop titled "Empowering Armenian Community with Financial Knowledge: Strategies for Building a better retirement" at the St. Illuminator Cathedral's John Pashalian Hall. After an introduction by Rev. Fr. Mesrob Lakissian, Ms. Bennett talked about the benefits of planning, managing, and saving finances for the future. Using a PowerPoint presentation, she discussed the different types of retirement accounts, benefits of life insurance, and distributed worksheets for participants to map their current and projected financial status. During the question and answer period, many participants eagerly asked her about the difference between types of retirement accounts, the benefits of investing in life insurance, and myths regarding social security benefits.



Opening remarks by Rev. Fr. Mesrob Lakissian



Ms. Anna Bennett during the presentation

HISTORY OF ARMENIA: PAST, PRESENT, FUTURE

Series of Seminars (8) began on Thursday, May 2, 2013

At the Cathedral's John Pashalian Hall

Sponsored by

St. Illuminator's Armenian Apostolic Cathedral and UN Armenian Mission

Facilitator: Artur Martirosyan, *PhD in Political Science*



Rev. Fr. Mesrob Lakissian welcoming
Dr. Martirosyan and participants



Dr. Artur Martirosyan



ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ Ս. ԼՈՒՍԱԽՈՐՀ ՍԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Չորեքշաբթի 24 եւ Կիրակի 28 Ապրիլ, 2013-ին երկու առիթներով, Պէյրութ հրատարակուող «Քաջին» պարբերաբերթի գլխաւոր խմբագիր՝ Տիար Յակոբ Պալեան այցելեց Ս. Լուսաւորիչ Մայր Եկեղեցի եւ հանդիպում ունեցաւ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովհի՛ Տ. Մեսրոպ Քհնյ. Լազիսեանի հետ:



Մարիլուիս Պալեան, Մեսրոպ Քհնյ. Լազիսեան եւ Յակոբ Պալեան

S A C R A M E N T S

W E D D I N G



**On Saturday, April 27, 2013 Rev. Fr. Mesrob Lakissian officiated the Wedding ceremony of
ABRAHAM OHANIAN and ELISA CRISTIANO
at the Our Lady of Perpetual Help Church, Lindenhurst, NY.**

Masis Ohanian and Gina Cristiano were Bestman and Matron of Honor.

**On this happy occasion, we wholeheartedly congratulate the newly married couple, wishing them a
happy and healthy life together!**



Տարուան 12 ամիսներէն ամենագեղեցիկը՝ Մայիսը, նուիրուած է մօր, նշելու եւ շեշտելու համար անոր մեծութիւնն ու կարեւութիւնը:

Մօր գաղափարը, սէրը, կարօտն ու գուրզուրանքը միշտ ալ ներշնչման աղբիր եղած են գրեթէ մեր բոլոր գլողներուն համար: Անոնք մեծ սիրով ու երախտագիտութեամբ արտայայտուած են մայրական սիրոյ եւ նուիրումին ջերմ եւ անսպառ զգացումներու մասին:

Այս էջով ամէն շաբաթ մեր սիրելի ընթերցողներուն պիտի ներկայացնենք մօր նուիրուած հետաքրքրական գրութիւններ եւ գիտելիքներ:



ՍԱՅՐ ԻՄ ԱՆՈՒԾ

Ես կը սիրեմ քու դէմքը, քու դէմքը, մայր իմ անուշ,
Խաղաղութիւնն աշքերուդ, նոյնքան բարի ու անուշ,
Ես կը սիրեմ ձեռքերդ, կապոյտ երակ գծերով,
Խորշոմները քու դէմքիդ, քու դէմքիդ, մայր իմ անուշ:

Չաւակներդ դեռ երեկ կը վազէին քու գրկիդ,
Յետոյ նորէն աղմուկով կը փախչէին քու գրկէդ:
Այսօր բռններդ են կու գան, հին օրերու խաղին պէս,
Եզերք վազող կապուտակ ալիքներու խաղին պէս:

Երբոր լուռ ես ու նստած, շալ մը ձգած ուսերուդ,
Իյիկն է որ կը մանես հին օրերու յուշերուդ,
Կը յիշես տունն հայրենի, ճամբանները արեվառ
Ուրկէ անցած ես թեթե՛ հովերուն հետ բռնած պար:

Ու կը պատմես թէ ինչպէս արեւն այնտեղ ուրիշ էր,
Ծաղիկներուն, խոտերուն համն ու հոտը ուրիշ էր,
Էն մեր վանքին, լեռան տակ զանգին ձէնը ուրիշ էր,
Ա՛խ, ուրիշ էր, ուրիշ էր, հացին համն իսկ ուրիշ էր:

Թափառեցայ երկիրներ, ճամբաններով շատ անցայ,
Տեսայ զրկանք, տեսայ ցաւ, սէր ու խնդում ես տեսայ,

Քայց չտեսայ, չզտայ ոչ մէկ սիրտ այնքան արի,
Քու հոգիիդ չափ ազնիւ, մա՛յր իմ անոյշ ու բարի:

ԱԿՆԱՐԿ' ԵՂԵՌՆԻ 98ՐԴ ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ

ԵՂԵՌՆԻ 98 ԱՄԵԱԿԸ՝ «ԱՉԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ» ՏԱՐԻ Դոքտ. Յրանդ Մարգարեան

Աւարտեցան Եղեռնի 98 ամեակի ոգեկոչական ձեռնարկները- հոգեհանգստեան արարողութիւններ, ցոյցեր, քայլարշաւններ, դասախոսութիւններ, համերգներ, մշակութային ելոյթներ...: Ձեռնարկները շարունակեցին շեշտել հայուն արթնութիւնը իր ազգային պահանջատիրութեան նկատմամբ: 98 ամեակի այս բոլոր ձեռնարկներուն մէջ, երկու նոր դրական քանակական ոստում (quantum jump) արձանագրեցինք: Առաջինը ազգային, երկրորդը՝ քաղաքական դաշտին մէջ:

Ա. ԱՉԳԱՅԻՆ ՃԱԿԱՏ

Պատմական թուականները իմաստ եւ խորհուրդ կը ստանան նոյն ժամանակին իրականացած դեպքերով եւ արարքներով, հետեւաբար, յիշատակելի թուականներ կը դառնան: Այսպէս, 1918ը կ'առանձնանայ որպէս Հայաստանի Ա. Հանրապետութեան, 1920ը՝ որպէս Սովետական Հայաստանի Հանրապետութեան, 1991ը՝ Հայաստանի Բ. Հանրապետութեան եւ 1992ը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հիմնադրութեան տարիներ: Դեպքերն են, որ պատմութեան «մարմին» կու տան եւ իրարայացորդ եւ շղթայակապ իրարադարձութիւններով զայն կը դարձնեն «կենդանի» իրողութիւն:

Եղեռնի յիշատակութեան ամեակներն ալ այդ ընդհանուր հոլովոյթին հետեւեցան: 50 ամեակը, օրինակի համար, այդ յատկանշական թուականներն մին եր, որ առանձնացաւ նոր շունչով: Յիսնամեակին եր, երբ Հայաստանի երիտասարդութիւնը ազգային մտաւորականներուն հետ, երեւանի փողոցներուն մէջ անակնկալ ցոյցերով պոռթեկաց՝ «մեր հողերը, մեր հողերը»: Վրթենութեան կանչ մըն եր, որ՝ Հողեն կու գար եւ Հողին վերականգնումը կը պահանջէր: Համայն հայութիւնը արձագանգեց եւ Եղեռնի 50 ամեակը նոր հանգրուանի մը հիմնադրումը եղաւ: Հասկցանք ազգովին, որ Եղեռնի յիշատակումը մեր հոգեհատոր նահատակները սգալու ամեակ չէ միայն, այլ անոնց արդար դատին, կես մնացած իղձերուն, անաւարտ պահանջատիրութեան օր է: 50 ամեակի այդ շրջադարձային կեցուածքը եղաւ ազգային արթնութեան շեփորումը:

Ազգային ճակատի այս հսկայ շրջադարձին եկաւ զուգորդուիլ Ուրուկուեյի՝ Եղեռնի ճանաչման հոչակումը 1965ին: Այդ թուականն մինչեւ 2007 թուականը, ՄԱԿի 193 երկիրներէն, 21 երկիրներ (11% տոկոսը) միացան ցանկին: Երկիրներու ցանկին վրայ աւելցան 16 շրջանային քաղաքական բաժանումներ: ԱՄՆի մէջ 50 նահանգներն, 43ը, այսինքն 86% տոկոսը, պաշտօնապէս Եղեռնը յայտարարած են Ցեղասպանութիւն:

Սակայն 2007ին մինչեւ 2012, քաղաքական դաշտին մէջ, Ցեղասպանութեան նոր պետական ճանաչում չեղաւ. երաշտ մը տիրեց:

Բարեբախտաբար արտաքին քաղաքական այս երաշտի շրջանին զուգընթաց, Ներազգային ճակատի վրայ, Հայաստանը իր պետութեամբ եւ ժողովուրով, եւ հարուածուած Սփիլուքը՝ հայկական քաղաքական իր կազմակերպութիւններով եւ արբանեակ միութիւններով ու մարմիններով, չդադրեցուցին իրենց հետապնդման գործունեութիւնները: Ընդհակառակը, ամեն շրջանի մէջ, ուժերու առաւելագոյն չափով, Հայը հրապարակային, Ներազգային եւ արտազգային ձեռնարկներով արթուն պահեց իր պահանջատիրութեան հարցը եւ հակադրեց Թուրքիոյ կառավարութեան ուրացման ժխտական ճիգերը: Եղեռնի պահանջատիրական ոգին շղթայակապեց Հայը, Հայաստանն մինչեւ Սփիլուքի ծայրամասի կեղրունները:

Կերը նշուած բոլոր ոգեկոչումներուն հետ, 2013 թուականը եւ Եղեռնի 98րդ ամեակը պիտի մեծատառ եւ արդար հպարտութեամբ յիշուի որպէս ԱՉԳԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՄԵԱԿ:

Ապրիլ 24, 2013ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Եւ Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա., Առաջին Աշխարհական Առաջարկութիւն մը հրապարակեցին, որով կ'արձագանգեին մեր ազգային արդար դատին պահանջներուն:

Միացեալ յայտարարութեան հիմնական երեք կետերը, ամբողջ ազգի մը անտեսուած եւ անարգուած արդարութեան շեփորումն են:

Կըսեն Վեհերը-

"Կոչ կ'ուղղենք Թուրքիոյ պետութեան եւ կը պահանջենք. -

1) Հայոց ցեղասպանութեան ճանաչում:

2) Ամբողջական հաստուցում հայ ժողովուրդի կրած կորուստնորուն եւ մարդկային բռնագրաւուած իրաւունքներուն:

3) Հայկական եկեղեցիներուն, վանքերուն ու եկեղեցապատկան կալուածներուն եւ հոգեւոր ու մշակութային արժեք ներկայացնող իրերուն անյապաղ վերադարձ հայ ժողովուրդին, որպէս անոնց իրաւատէրը:"

Վեհափառ Հայրերու այս կեցուածքը, Զիրենք կը գետեղէ Հայոց Պատմութեան հպարտ պատուանդանին վրայ: Ժողովուրդին ուղղուած իղձերու պահանջատիրութեան կոչը, Զիրենք պիտի դասէ մեր ազգային ճակատի վրայ այս կաթողիկոսներու շարքին, որոնք Հայ Ազգի դառնութեան օրերուն, տկարութեան օրերուն, պատերազմի օրերուն, վիատութեան օրերուն, կեցան ազգին պայքարի առաջին շարքերուն վրայ: Եղան թէ՛ ղեկավարները, թէ՛ հրահրողները, թէ՛ գիտակցութեան հրաւիրողները, թէ՛ պայքարողները:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. Եւ Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա., 98 ամեակը վերածեցին "ԱՉԳԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ" ի մը: Անոնք, ՆՈՐ ակոս մը բացին մեր ազգային պահանջատիրութեան պայքարի ճանապարհին համար: Միասնաբար գործելու ՆՈՐ ուղղութիւն մը տուին: ՆՈՐ մտայնութեան հիմքը դրին: ԱՉԳԱՅԻՆՈՐԻ վերածեցին:

Կը մնայ որ՝ ազգային ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ այս գիտակցութիւնը դառնայ վիթխարի ու յորդող ալիք մը, եւ կոհակ առ կոհակ տարածուի ամենուրեք, կլանէ եւ հրահրէ մեզ եւ խարսխուի մեզմէ ամեն մեկուն մտքին մեջ եւ դառնայ ազգային գործելակերպի մը հիմնաքարը...:

Բ. ԹՐՅԱԿԱՆ ՃԱԿԱՏ

Երկրորդ ոստումը կու գայ պատմական Տիգրանակերտեն:

Տիգրանակերտ-Տիարպէքիր, Թուրքիա: Տիարպէքիրի քնակչութեան 99 տոկոսը Զիւրտ են: Վերջերս Եղեռնին նուիրուած Ձեռնարկ մը կազմակերպուեցաւ տեղույն քաղաքապետարանի եւ իրաւաբաններու միութեան կողմէ:

Արմինիքն Ուկրիի թղթակից Կոլխասր Աքքում Տիարպէքիրեն կը հաղորդէ (տես Armenian Weekly April 24, 2013) թէ՛ "Ապրիլ 23ին մեծ թիւով հասարակութիւն մը հաւաքուած էր Տիարպէքիրի քաղաքապետարանի կեղրուին մեջ յիշատակելու Հայկական Յեղասպանութիւնը:" (Ընդգծումը ՀՅ): Քաղաքի հայկական համայնքի ոչնչացման 98ամեակի ոգեկոչական ծեռնարկը կազմակերպուած էր Տիարպէքիրի իրաւաբանական Կազմակերպութեան եւ Տիարպէքիրի քաղաքապետարանին կողմէ: Վիճարկումին կը մասնակցեին պատմաբան Արա Սարաֆեան եւ Տիկի ատենապետ Թահիր Էլսի: Իր բացման իսուրին մեջ, Էլսի ըսաւ որ Ապրիլ 24, 1915ին հսկանպովի հայ մուաւրականներու եւ համայնքի ղեկավարներու ծերբակալումն քանի մը շաբաթ Ետք, և ման ծերբակալումներ տեղի ունեցան Տիարպէքիրի մեջ: Ծեշտելով քիւրտերուն մասնակցիլը Յեղասպանութեան, ան նկատել տուաւ, որ

‘Յեղասպանութիւնը դիմակալելը քիւրտերուն կողմէ, անխուսափելի է: Աւելին, ան առարկեց՝ որ քիւրտերը պէտք է աջակցին հայերու պայքարին ընդիւմ պետական ուրացման քաղաքականութեան Եւ գաղափարախօսութեան: Մենք մեծացանք մեր մեծ հայրերու՝ Յայկական ջարդերու պատումներով: Ուրացողներու բռնած ընթացքը չի դիմանար իրաւական Եւ պատմական լուրջ քննարկումներուն: Այսօր մենք Տիարպերիի մէջ, առաջին անգամ ըլլալով կ'ոգեկշենք Յեղասպանութիւնը: Այսօր շատ կարեւոր օր մըն է մեզի համար: Մենք յարգանքով կը խոնարիինք յիշատակին առջեւ մեր Յայ Եղբայրներուն, որոնք սպաննուեցան 1915ին Եւ կը դատապարտենք Յեղասպանութիւնը՝ Եղրափակեց Էլսին:

Սարաֆեան կեղրունացաւ 1915ին Տիարպերիի հայերու բնաշնչումի ատեն գործադրուած միջոցներու մասին: Ըսաւ, որ Տիարպերի եկած է հայերու բնաշնչումի մասին հետազոտութիւն կատարելու Եւ տեղացիները շատ օգտակար եղած Են:

Ժողովը ետք, ներկաները ուղղուեցան Տիգրիս Գետի ափը Եւ ծաղիկներ նետեցին գետին մէջ ի յիշատակ Յեղասպանութեան ատեն սպաննուած հայերուն:”

Պէտք է արձանագրել, որ այս հաւաքը Եղակի՝ դեպք է Թուրքիոյ պատմութեան մէջ: Առաջին անգամն Է, որ պետական մարմին մը, թեկուզ քաղաքապետարան մը, քաջութիւնը կ'ունենայ՝ 1915ի դեպքերը Յեղասպանութիւն որակելու: Պէտք է նաեւ նշել, որ, Թուրքիոյ մէջ կան անհատներ, պատմաբան Եւ գրող, որոնք Եղեռնը որակած Են Յեղասպանութիւն: Լրատունները Եւ ակնարկ գրողները աւելի զգուշ Են: Յեղասպանութիւն բառը չակերտի մէջ կ'առնեն, ըսուածը ուրիշին վերագրելով:

Այս գրութեան նպատակը այդ մօտեցումներուն վերլուծումը Եւ անոնց ծալքերուն անդրադառնալը չէ: Սակայն Տիարպերիի մէջ կատարուածը, քրտական շահերին թելադրուած, քրտական ազատագրական պայքարի մը դրսեւորման ծալքերը կ'արձագանգեն: Ինչ որ ալ ըլլան դրդապատճառները, խիզախն քայլ մըն է ուղղուած Թուրքիոյ պետութեան դեմ: Տիարպերիի քիւրտերը այս քայլով նաեւ կը յիշեցնեն Թուրքիոյ պետութեան, որ ՏԵՂԵՎԿ’ Են պատմութեան, Եւ որ 98 տարի ետք, Եթէ Տիարպերիի քիւրտերը Եղեռնը որակեցին Յեղասպանութիւն, Տիարպերիին դուրս գտնուողներն ալ կրնան նոյնը ընել: Այլ իսկաքանչ հարցը համաքրտական հարց Է Եւ սահմանափակուած չէ Տիարպերիով:

Արդեօք Եղեռնի 99րդ ոգեկոչման Թուրքիոյ մէջ, ուրիշ նահանգներ ալ պիտի մասնակցին արդարութեան կանչին:

Նշուած երկու իրագործումները՝ Վեհափառ Յայրերու միացեալ յայտարարութիւն-կոչը Եւ Տիգրանակերտի ձեռնարկը, ՆՈՐ մակարդակի մը կրայ դրին Եղեռնի 98 ամեակը:

Իսկ Եղեռնի գալիք ամեակներու նախօրեակին, պահանջկոտ պատմութիւնը մեզի լուրջ հարցադրումներու առջեւ կը դնե-

- Յաջորդող ամեակներուն պիտի անդրադառնա՞ք Վեհերու անկիւնադարձային այս կոչին:
 - Պիտի գիտակցի՞նք, որ Եղեռնը՝ հատուածական, յարանուանական, կուսակցական դեպք մը չէ, այլ ազգային Ե՝ խորքո՞վ, բովանդակութեա՞մբ Եւ պահանջատիրութեամբ:
 - Պիտի կարենա՞ք պատմութեան պահանջկոտ մարտահրաւերին մօտենալ ազգովին ՄԻԱՑԵՎԼ ուժերով Եւ շարունակել նոր նուաճումներ արձանագրել:
 - Պիտի կարենա՞ք միջազգային առումով ծրագիրներ մշակել, ճշդել մեր ուղին Եւ յամառօրէն, գիտակցորէն, առանց ընկրկելու յարատեւել:
 - Պիտի կարենա՞ք...
- Պատմութիւնը մեզի կը սպասէ:

SUNDAY, MAY 5, 2013

Ա. ՅԱՐՈՒԹԵՆՔՆ ԵՏՔ 6-ՐԴ ԿԻՐԱԿԻ

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ (9:39-10:10)

Յիսուս ըստ. - Դատաստան ընելու եկայ այս աշխարհը, որպէսզի չտեսնողները տեսնեն եւ անոնք որ կը տեսնեն՝ կորնան: Փարիսեցիներէն ոմանք, որ շորջն էին, լսեցին ասիկա եւ հարցուցին. - Արդեօք մե՞նք ալ կոյր ենք: Յիսուս անոնց պատասխանեց - Եթէ կոյր ըլլայիք՝ մեղք պիտի չունենայիք. բայց քանի կ'ըսէք թէ կը տեսնէք, կը նշանակէ՝ թէ ձեր մեղաւոր ըլլալը կը հաստատէք: Հաստատ գիտցէք, ան որ ոչխարներուն փարախը դրնէն չի մտներ, այլ որիշ տեղէ կը մազլցի, անիկա զող է ու աւազակ. իսկ ան որ դրնէն կը մտնէ, անիկա ոչխարներուն հովիսն է: Դռնապանը դուռը կը բանայ անոր եւ ոչխարները իր ձայնին կը հետեւին: Իրենց ամուններով կը կանչէ եւ դուրս կը տանի զանոնք: Եւ երբ իր ոչխարները դուռս կը հանէ՝ ինք կ'առաջնորդէ, եւ ոչխարները կը հետեւին իրեն, որովհետեւ իր ձայնը կը ճանչնան: Օտարին չեն հետեւիր. ընդհակառակը, կը փախչին անկէ, որովհետեւ օտարներուն ձայնը չեն ճանչնար:

Յիսուս կրկին ըստ անոնց. - Հաստատ գիտցէք, թէ են եմ ոչխարներուն դուռը: Բոլոր անոնք որոնք ինձմտ առաջ եկան, զող էին եւ աւազակ, բայց ոչխարները անոնց չհետեւեցան: Են եմ դուռը: Ով որ ինձմտ անցնելով ներս մտնէ՝ պիտի փրկուի, պիտի մտնէ եւ ելլէ եւ ճարակ զտնէ: Գողը կու զայ միայն գողնալու, սպաննելու եւ փճացնելու համար: Ես եկայ որպէսզի կեանք ունենան եւ լեցուն կեանք ունենան:

Ճ. ԸՆԹԵՐՑՈՒՄ

Գործը Առաքելոց 20 : 17 - 38

Ա. Յովհաննէս 3 : 2- 6

SIXTH SUNDAY OF RESURRECTION

THE GOSPEL ACCORDING TO JOHN (9:39-10:10)

Jesus said, “I came into this world for judgment so that those who do not see may see, and those who do see may become blind.” Some of the Pharisees near him heard this and said to him, “Surely we are not blind, are we?” Jesus said to them, “If you were blind, you would not have sin. But now that you say, ‘We see,’ your sin remains. Very truly, I tell you, anyone who does not enter the sheepfold by the gate but climbs in by another way is a thief and a bandit. The one who enters by the gate is shepherd of the sheep. The gatekeeper opens the gate for him, and the sheep hear his voice. He calls his own sheep by name and leads them out. When he has brought out all his own, he goes ahead of them, and the sheep follow him because they know his voice. They will not follow a stranger, but they will run from him because they do not know the voice of strangers.

Jesus used this figure of speech with them. Jesus said to them, “Very truly, I tell you, I am the gate for the sheep. All who came before me are thieves and bandits; but the sheep did not listen to them, I am the gate. Whoever enters by me will be saved, and will come to steal and kill and destroy, I came that they may have life and have it abundantly.

BIBLE READINGS

Acts 20 : 17 – 38 1 John 3 : 2- 6

Տ. ԶԱՐԵՀ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶՆԱՎՈՐԵԱՆԻ ՅԻԾԱՍԿԻՆ

IN MEMORY OF ARCHBISHOP ZAREH AZNAVORIAN
(1947-2004)



The bust of Archbishop Zareh Aznavorian in Cyprus



Աստուծոյ խօսքը սրտի մաքրութեան ու սրբութեան աղբից է, կեանքի դեղ, չարէն պատճառուած հիւանդութեանց ու խոցերուն առողջացնուցիչ բալասան, որով մեզ լուաց մեր Տերը՝ Յիսուս Քրիստոս, ըսելով. «Դուք արդէն իսկ մաքրուած էք այն խօսքին համար՝ որ ձեզի խօսեցայ» (Յհ. 15.3):

ԶԱՐԵՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ

FROM CATHEDRAL'S MAIL BOX



Rev. Fr. Mesrob Lakissian, Pastor
Board of Trustees
St. Illuminator's Armenian Apostolic Cathedral

April 25, 2013

Dear Pastor and Board members,

Thank you for your generous donation of \$300.00 for the village of Nor Giligia in Artsakh that your parishioners have donated through special plate offerings. I am deeply grateful for your response to my appeal. Please extend my thanks to your parishioners for their participation.

As I explained, the Nor Giligia project is being undertaken by the Holy See of Cilicia after consultation with the government of Artsakh. All of the prelacies under the jurisdiction of the Catholicosate of Cilicia are taking part in the revitalization of this small, but strategically located border village.

This is one small step in strengthening Artsakh, but the small steps result in a big leap toward progress and security.

I wish you success in your service to our beloved Armenian Church and thank you for your dedication and commitment.

Prayerfully,
Archbishop Oshagan, Prelate
Eastern United States of America

April 27, 2013


St. Illuminator's Armenian Apostolic Cathedral
Rev. Fr. Mesrob Lakissian, Pastor

Dear Der Mesrob,

I would like to thank you for sending me the St. Illuminator Cathedral's E-Newsletter. I want to congratulate you for your hard work for our Mother Church and its parishioners.

Cathedral has gone through amazing changes since I was a student at NYU in 90s and later visited New York City in 2012.

Best Regards and hope to see you soon,
Dr. Garo Topalian
Venezuela



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՎԱՐԻ ԱՏԼԱՏ

HISTORICAL ATLAS OF ARMENIA

AVAILABLE NOW

30 MAPS / 174 COLOR & MONOCHROME PHOTOS / + CD-ROM
12.5 X 9 INCHES / SOFTCOVER / 110 PAGES

INTRODUCTORY PRICE: \$40 + SHIPPING

TO ORDER CALL 212-689-7810
OR EMAIL US AT BOOKS@ARMENIANPRELACY.ORG

The Atlas is a publication of the Armenian National Education Committee (ANEC)

Sunday, May 5, 2013 at 1:00pm

"A NEW ATLAS FOR A NEW GENERATION"

Speaker: Dr. Vartan Matiossian, Executive Director of Armenian National Education Committee (ANEC), St. Illuminator's Cathedral, following the Divine Liturgy in Pashalian Hall. Copies of the *Atlas of Historical Armenia* will be available for sale.

Sponsored by
St. Illuminator's Armenian Apostolic Cathedral and UN Armenian Mission

HISTORY OF ARMENIA: PAST, PRESENT, FUTURE

Series of Seminars (8)

Facilitator: Artur Martirosyan, *PhD in Political Science*

May 2 to June 20, 2013

Every Thursday from 7:00pm to 8:30pm

**At the St. Illuminator Cathedral's John Pashalian Hall
221 East 27th Street, New York, NY 10016**



The participants attending all seminars will be awarded course
completion certificates.

For information please call Cathedral's office: 212-689-5880 or email: office@stilluminators.org



ԱՐԵՐՈՒՄ ՕՐՈՒՅՑ ԱՌԹԻՒ

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ-ՃԱԾԿԵՐՈՅԹ

Ի ՊԱՏԻՒ ՀԱՅ ՍԱՅՐԵՐՈՒՄ

Կազմակերպութեամբ՝

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԵՌՈՒԹԵԱՆ «ՍԱՅՐ» ՍԱՍՆԱՋԻՆԴԻ

*The ARS Mayr Chapter Presents:
A Mother's Day Dinner Dance*

*Featuring Music by Huyser Music Ensemble of
St. Illuminator's Armenian Apostolic Cathedral*

Recitation by Astghik Boudakian



Friday, May 10, 2013 at 8:00 p.m.

*The Armenian Center
69-23 47th Avenue, Woodside, NY*

*Full three-course dinner
Adults: \$40; Children under 10: \$25*

*For reservations, please call:
Anais at 718-392-6982 or Anahid at 718-263-9325*

*Parking available
Bring the entire family and join us in celebrating all mothers!*

Armenian Relief Society of Eastern United States, Inc.

Regional Educational Seminar




Saturday, May 18, 2013

St Illuminator's
Armenian Apostolic
Cathedral's Hall
221 East 27th Street,
New York, NY.

Hosted by
ARS New York Mayr and
Erebouni Chapters

Celebrating the year 2013 “The Year of Armenian Mother”



AGENDA

10:00-10:30 a.m.	Continental Breakfast
10:30-10:45 a.m.	Welcoming Remarks
10:45-12:00 noon	"The Armenian Woman, Leola Sassouni" <i>Guest Speaker: Dr. Chris Sassouni Grandson of Leola Sassouni</i>
12:30-1:30 p.m.	Lunch
1:30-3:00 p.m.	"The Women of 1915" <i>Guest Speaker: Unger Bared Maronian Writer/Director/Producer Emmy Award-winner</i>
3:00-4:30 p.m.	Discussion Forum Lead By: ARS Eastern USA Board Closing Remarks
"Information will be forthcoming, about hotel availability and optional dinner".	

Registration Information

The program is available to Armenian Relief Society members and friends of the Armenian Relief Society.

Space is limited. Registration is due by **May 1, 2013.**

REGISTER

Or email us at arseastus@gmail.com or call ARS Eastern USA office at 617-926-3801.

Կազմակերպութեամբ Սուրբ Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ և
Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Նիւ Եռքի Մասնաճիւղի

Համերգ, նուիրուած Սայեաթ Նովայի ծննդեան 300-ամեակին

Ծրագիր՝ Սայեաթ Նովայի եւ այլ աշուղներու սիրուած երգեր



ՈՒՐԲԱԹ, ՅՈՒՆԻՒ 7, ԺԱՄ 8:00ին

Friday, June 7th, at 8 PM

At the Armenian Center, 69-23 47th Avenue, Woodside, NY

ՄԵՆԱԿԱՏԱՐ՝ ՄԻՐՈՒԱԾ ԵՐԳԻՉ ԷԼԻ ՊԵՐՊԵՐԵԱՆ
իր նուազախումբի ընկերակցութեամբ

CONCERT DEDICATED TO THE 300th JUBILEE OF SAYAT NOVA

FEATURING ELIE BERBERIAN (Canada) and his band

Songs by Sayat Nova and other favorite minstrels

Մուտքի նուէր՝ \$25.00, հիւրասիրութիւնը ներառեալ

Suggested donation: \$25.00, post-concert reception included

For tickets please contact office@stilluminators.org; gradarank@gmail.com or call 212-689-5880

The Armenian Genocide

AN OPEN INVITATION TO THE DESCENDANTS OF THE ARMENIAN GENOCIDE

. memories... are
. testimonies... are
. documentations... are
calls for justice!

PROJECT: TESTIMONIES - voices of the people

- "TESTIMONIES" is a collection of personal accounts of the Armenian Genocide documented by the descendants of the martyred and/or survivors of their struggle against mass annihilation.
- Every Armenian has a story about his/her ancestors' ordeals during the Armenian Genocide.
- The accounts will be published in **ENGLISH** in a series of volumes.
- Let us honor, preserve, share, and document the memories of the martyrs and survivors.
- Let us tell the stories of those who were silenced; it is our obligation!

Editorial Board

Iris Chekenian, Tom Vartabedian, Raffi Setian, Iris Papazian

Criteria for submission:

- 1- All accounts must be true stories.
- 2- Submissions have to be personal accounts and include the following:
 - a. Names of the martyred and/or survivors
 - b. Birth place (village, town, area) and birth date (if available)
 - c. Atrocities in detail
 - d. Path of migration: towns and settlement; pictures (if available)
 - e. The accounts should cover from the date of the atrocities to the present
- 3- The write-up may be from 1 to 15 double-spaced typed pages (one page is 250 words).
- 4- The account should be in **English**; texts in Armenian will be accepted also.
- 5- A cover page with submitter's name, address, E-mail, date of submission and signature.
- 6- Libra-6 Productions, Inc. reserves the right to accept or reject any submission and holds all rights to the published volumes.
- 7- Please note: There is no deadline for submissions. The first volume will go to print when 500 pages are compiled. Subsequent volumes will follow similarly. The earlier the submission, the more chance it has to be printed in the next volume.
- 8- Electronic submissions may be sent to: <libra6testimonies@yahoo.com>.

For further inquiries, contact

Dr. Herand M. Markarian, President
LIBRA-6 PRODUCTIONS, Inc.

A USA based Not-for-profit organization pursuing humanitarian values through theater, art and cultural activities
<libra6productionsinc@yahoo>

UPCOMING EVENTS



GO!

May 2 to June 20, 2013

Every Thursday from 7:00pm to 8:30pm

At the Cathedral's John Pashalian Hall

Sponsored by

St. Illuminator's Cathedral and UN Armenian Mission

HISTORY OF ARMENIA: PAST, PRESENT, FUTURE

Series of Seminars (8)

Facilitator: Artur Martirosyan, PhD in Political Science

Sunday, May 5, 2013 at 1:00pm

“A NEW ATLAS FOR A NEW GENERATION”

Speaker: Dr. Vartan Matiossian, Executive Director of Armenian National Education Committee (ANEC), St. Illuminator's Cathedral, following the Divine Liturgy in Pashalian Hall. Copies of the *Atlas of Historical Armenia* will be available for sale.

Saturday, May 18, 2013

From 10am to 4:30pm

ARS of Eastern United States, Inc.

REGIONAL EDUCATIONAL SEMINAR

CELEBRATING THE YEAR 2013

“THE YEAR OF THE ARMENIAN MOTHER”

Sunday, May 19, 2013 at 1:00pm

ST. ILLUMONATOR'S ARMENIAN SATURDAY SCHOOL'S YEAR END HANTES

At the Cathedral's John Pashalian Hall

Sunday, September 15, 2013

FEAST OF EXALTATION OF THE HOLY CROSS

DIVINE LITURGY, BLESSING OF THE HARVEST (ԱՅՊԱՍՏԻՒՄ), MADAGH

BOOK PRESENTATION “ONE CHURCH ONE NATION” by HRAIR HAWK KHATCHERIAN